

ԲԱՅ ԴԱՍ

Ապահով համացանց



Դասի նպատակը` Սովորողներին տալ գիտելիքներ համացանցից անվտանգ օգտվելու մասին:

Կրթական`

Համացանցից օգտվելու լայն հնարավորությունների և օգտագործման ժամանակ հնարավոր վտանգների վերաբերյալ սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացում:

Աշակերտների կողմից համացանցից անվտանգ օգտվելու կանոնների յուրացում:

Դաստիարակչական`

Վիրտուալ տարածքում ճիշտ կողմնորոշվելու ունակությունների ձևավորում:

Չովեմի միջնակարգ դպրոց` Հ. Կորայան 2016

Համացանցն օգտագործելիս ծայրահեղ զգուշության և պատասխանատվության գիտակցության բարձրացում:

Կահավորում.

Պրոյեկտոր, համացանցին միացված համակարգիչ:

Դիդակտիկ նյութեր. «Ապահով համացանց» թեմայով պատատոներ և բուկլետներ, PowerPoint պրեզենտացիա:

Դասարանը բաժանված է 2 խմբի. համացանցը մեղադրող և պաշտպանող կողմեր:

Դասի պլան-սցենար

1. **Դասի նպատակի ներկայացում-** Ներկայացնում է հեղինակը /3 րոպե/
2. **Համացանցը մեր կյանքում-** Տեսաֆիլմի ցուցադրում, քննարկում /5-7րոպե/:
3. **Համացանցի վտանգները և թերությունները-** Ներկայացվում է դատական նիստի ժամանակ , որպես համացանցի մեղադրանք /5-7րոպե/:
4. **Ինչպես խուսափել այդ ամենից-** Փոքրիկ մանկապատումներ /5-7րոպե/:
5. **Անվտանգության կանոններ և էթիկա -** Ներկայացվում է որպես համացանցի պաշտպանություն /10րոպե/ :
6. **Մարդկությանը սպառնացող աղետ-** Հոգեբանական վերլուծություն և խրատ, տեսանյութի ցուցադրում /3-5րոպե/:

Դասի ընթացքը

1. **Նախապատրաստական մաս, դասի նպատակը /3 րոպե/**

Դատարանի դահլիճում քննարկվում է քաղաքացի Համացանցիկի գործը:

Իրավաբանիկը ներկայացնում է Համացանցիկի կյանքը, գործունեությունը և դրա կարևորությունը:

Համացանցի հնարավորությունների ներկայացում -/5-7 րոպե/

Շուրջ 40 տարի առաջ, երբ ստեղծվում էր համաշխարհային սարդոստայնի հայեցակարգը, քչերն էին պատկերացնում, թե ընդամենը մի քանի տարի անց ինչ հեղափոխություն է կատարվելու մարդկանց կյանքում: Այսօր աշխարհի բնակչության ավելի քան մեկ քարոքն օգտվում է համացանցից, և այդ թիվն օրավուր աճում է: Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության մի բնագավառ, ուր արդեն թափանցած չլինի համացանցը: Տեղեկատվական անսպառ շտեմարաններ, զանգվածային լրատվամիջոցներ, եղանակի կանխատեսում, թվայնացված քարտեզներ և կողմնորոշման համակարգեր, կապի արագ և էժան միջոցներ,

Չովեմի միջնակարգ դպրոց` Հ. Կորայան 2016

սոցիալական ցանցեր, բանկային ծառայություն, առցանց առևտուր և բիզնես, թվային գրադարաններ և թանգարաններ, երաժշտություն, նկարներ, տեսանյութեր, առցանց խաղեր և ժամանց, առողջապահություն, կառավարում. սրանք միայն մի փոքր մասն են այն ոլորտների, որտեղ համացանցի շնորհիվ արմատապես փոխվել են մարդկանց ապրելու, շփվելու, աշխատելու և հանգստանալու ժամանակակից կերպն ու հնարավորությունները:

Ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց համացանցի: Տրամադրելով անսահման և աննախադեպ հնարավորություններ` համացանցը պարունակում է նաև բազմաթիվ վտանգներ, հատկապես երեխաների համար:

2. Համացանցը մեր կյանքում` տեսահոլովակի ցուցադրում:

3. Համացանցին վտանգներն ու թերությունները /5-7րոպե/

Խոսում է քաղաքացի Համացանցիկին մեղադրող կողմը.

Վիրտուալ տիրություն այսօր ոչ մեկս ապահովագրված չենք.

Կան ռիսկեր.

- Վիրուսների ներթափանցում համակարգիչ, համակարգչի վարակում և ինֆորմացիայի կորուստ:
- Վիրավորանքներ այլ օգտագործողների կողմից:
- Խաբեության հնարավորություն:
- **SLIDE/ցուցադրում/**
- Ժամանակի վատնում
- Կախվածություն
- Միսալ ինֆորմացիա
- Լրտես ծրագրեր
- Ոչ պարկեշտ կայքեր
- Կիրբերհանցագործություններ` Խաբեություն, շորթում, գողություն: (Աղբյուր` <http://safe.am>)

Չովեմի միջնակարգ դպրոց` Հ. Կորայյան 2016

4. Ինչպես խուսափել այդ ամենից /5-7 րոպե/

Խոսում է քաղաքացի Ապահովիկը և նրա ապահովիկ-կանոնիկների թիմը.

-Ես ստեղծվել եմ, որպեսզի մարդն իրեն անկաշկանդ և ապահով զգա վիրտուալ տիրույթում:

SLIDE/Ցուցադրում/

Հետևեք անվտանգության կանոններին, և դուք կունենաք ապահով համացանց
(Աղբյուրը` <http://safe.am>)

1. Ձեր ծածկագրերը պետք է լինեն բարդ և գաղտնի:
2. Երբեք անձանոթներին մի՛ փոխանցեք ձեր գաղտնաբառը:
3. Ամիսը մեկ անգամ փոխեք ձեր գաղտնաբառը:
4. Անձանոթների նամակները մի՛ կարդացեք:
5. Անջատեք վեբ տեսախցիկը, երբ այն չեք օգտագործում:
6. Անտեսե՛ք կիբերխուլիզաններին, բայց ցո՛ւյց տվեք մեծերին նրանց նամակները:
7. Մերժե՛ք անձանոթների կապի առաջարկները:
8. Ձեր անձնական տվյալները մի՛ ցուցադրեք հասարակական վայրեյում:

5. Անվտանգության կանոններ և էթիկա- մանկապատումների ներկայացում -` /10րոպե/

Բեմադրություն 1. Խաբեություն և հեղինակային իրավունքների ոտնահարում:

Երբեք անձանոթներին մի՛ վստահեք ձեր համակարգչի կամ էլեկտրոնային փոստի գաղտնաբառը:

Երեխայի օգնությամբ Խաբեբայանների ընտանիքը Շոկոլադյանների ընտանիքի անձնական համակարգչից վերցնում է շատ կարևոր ինֆորմացիա և դրա շնորհիվ հարստանում:

Ահա ինչ կարող է պատահել, երբ վստահում ես քո գաղտնաբառը:

Բեմադրություն 2.

Անշատի՛ր վեբ տեսախցիկդ, երբ այն այլևս չես օգտագործում:

Երեխան անփութորեն միացված է թողնում SKYPE տեսախցիկը, և երբ գողերը փորձում են տուն մտնել, տեսախցիկից այն կողմ նստած ընկերը կարողանում է ժամանակին կանչել իրավապահ մարմիններին:

Այս անգամ երեխայի թույլ տված անփութությունն օգնեց այս ընտանիքին, բայց պատկերացրե՛ք՝ միացված թողնելով տեսախցիկը՝ դուք փաստորեն թույլ եք տալիս օտարներին ներխուժել ձեր անձնական կյանք:

Բեմադրություն 3.

Երկու դպրոցական ծանոթանում են համացանցով և որոշում հանդիպման գնալ: Պարզվում է՝ նրանք քույր և եղբայր են, բայց համացանցում խաբել են իրենց ինքնության մասին:

-Սա մեզ դաս լինի, սիրելի՛ եղբայր, այլևս երբեք չգնանք հանդիպման համացանցային ծանոթների հետ:

-Երբեք չես կարող վստահ լինել՝ դիմացինդ պահպանո՞ւմ է շփման էթիկայի կանոնները, թե՞ ոչ:

6. Մարդկությանը սպառնացող աղետ՝ համացանցային կախվածությունը - /3-5 րոպե/

<https://www.youtube.com/watch?v=pZcS05oZVB4>

Խոսում է քաղաքացի Հոգեբանիկը, այնուհետև մեղադրող կողմը.

-Պարոն դատավոր, ես պրոֆեսոր Հոգեբանիկն եմ: Այսօր ես շրջում եմ ամբողջ աշխարհով և ցնցված եմ. գիտե՞ք՝ որոշ երկրներում մարդիկ կորցրել են իրականության զգացումը, նրանք ապրում են վիրտուալ աշխարհում. խաղում են, գնումներ կատարում, շփվում մարդկանց հետ միայն համացանցով:

Նույնիսկ կան երկրներ, ուր կախվածությունը վիրտուալ շփումից համարվում է իրական խնդիր, կարելի է ասել նաև բժշկական խնդիր:

Տեսաֆիլմի ցուցադրում

SLIDE/Ցուցադրում/

Համացանցային կախվածությունը բնութագրվում է որպես հոգեկան խանգարում, համացանցին միանալու կաշտն ցանկություն և համացանցից ժամանակավոր հրաժարվելու հիվանդագին անկարողություն: Համացանցային կախվածությունը երբեմն նաև անվանում են համակարգչային ադիկցիա կամ համացանցի պաթոլոգիական կիրառում: Կան համակարգչային կախվածությանը բնորոշ մի շարք հոգեբանական և ֆիզիկական ախտանիշներ, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Այդ հոգեբանական ախտանիշներն են.

- Համակարգչի առջև գտնվելու ժամանակ լավ ինքնազգացողություն և էյֆորիայի վիճակ,
- Դադարեցնելու անկարողություն,
- Համակարգչի մոտ անցկացվող ժամանակի պարբերական ավելացում,
- Ընկերներին և ընտանիքի անդամներին արհամարհում,
- Համակարգչից հեռու գտնվելու դեպքում զայրույթի և դատարկության զգացում,
- Ստախտություն,
- Ուսման կամ աշխատանքի հետ կապված խնդիրներ:

Իսկ ֆիզիկական ախտանիշները հետևյալն են.

- մկանային լարվածություն,
- աչքերի մեջ չորության զգացում,
- գլխացավ,
- ցավի զգացում թիկունքի մասում,
- անկանոն սննդակարգ,
- անձնական հիգիենայի խեղում,
- քնի խանգարում; (աղբյուր` dasar.am կայք)

Բեմադրություն 4.

Երեխաները գիտակցում են, որ շփումն իրական աշխարհում առավել կարևոր և հետաքրքիր է:

Դատարանի որոշում.

Ձրվեժի միջնակարգ դպրոց` Հ. Կորայյան 2016
Կշեռքի նժարի վրա միաժամանակ դնելով
համացանցի դրական և բացասական կողմերը`
գալիս ենք այն մտահանգմանը, որ գիտության
և տեխնիկայի արագընթաց զարգացման
ժամանակաշրջանում հնարավոր չէ
պատկերացնել կյանքն առանց համացանցի. չէ՞
որ նրա տված ինֆորմացիան և գիտելիքներն
անխոս առավել են ցանկացած հարուստ
գրադարանից, մյուս կոմից էլ, տարվելով այդ
ինֆորմացիայի մեծ հոսքով, ունենում ենք
ժամանակի մեծ կորուստ և իրական շփման
քաղց: Խնդրի լուծման ամենախելամիտ և ճիշտ
լուծումը հետևյալն է:



1. Օգտվել համացանցից` չանտեսելով և
չմոռանալով մեր հարազատների և մտերիմների հետ ուեալ շփումը:

2. Հիշել` համացանցը ինֆորմացիայի մեծ հանրագիտարան է, ոչ թե «պարապ
վախտի խաղալիք» :

3. Համացանցը պետք է դարձնենք մեր գերին` հնարավորինս շատ
«աշխատացնելով» և ինֆորմացիա կորզելով նրանից, ոչ թե մենք դառնանաք նրա
գերին` անմոռաց գամվելով նրա առջև: (Աղբյուր` aravot.am կայք)

Բուկլետների բաժանում` «Ապահով համացանց»: